ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

№_____ « ____ »_____ **2024 թ.** **ք.Երևան**

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N 200-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու և պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2021 թվականի օգոստոսի 17-ի N 259-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 200-Ա հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետով հաստատված 1-9 հավելվածներում կատարել հետևյալ լրացումները.

1) Հրամանի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ հավելվածների 5-րդ բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ՝ նոր 5.10-րդ կետով.

«5.10. Բաժնի աշխատակցի արձակուրդում կամ անաշխատունակության ժամանակահատվածում գտնվելու ընթացքում վերջինիս լիազորությունները վերապահվում է պաշտոնի անձնագրով սահմանված համապատասխան աշխատակցին»,

2) Հրամանի 3-րդ հավելվածի 5-րդ բաժնում՝

ա. 5.2. կետի 2-րդ ենթակետում «10-26-րդ» թվերից առաջ լրացնել «3-րդ,» թիվը,

բ. լրացնել հետևյալ խմբագրությամբ՝ նոր 5.10-րդ կետով.

«5.10 Բաժնի աշխատակցի արձակուրդում կամ անաշխատունակության ժամանակահատվածում գտնվելու ընթացքում վերջինիս լիազորությունները վերապահվում է պաշտոնի անձնագրով սահմանված համապատասխան աշխատակցին:».

3) Հրամանի 6-րդ հավելվածում՝

ա. 2.1-ին կետից առաջ նշված «ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ» բառերից առաջ լրացնել «2» թիվը,

բ. 3-րդ բաժնի 3.1-ին կետը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր՝ 8.2-րդ ենթակետով.

«8.2) իրականացնում է պետական սեփականություն հանդիսացող գույքի էլեկտրոնային հաշվառման համակարգի ծրագրային սպասարկման ապահովումը,»,

գ. 5-րդ բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ՝ նոր 5.10-րդ կետով.

«5.10. Բաժնի աշխատակցի արձակուրդում կամ անաշխատունակության ժամանակահատվածում գտնվելու ընթացքում վերջինիս լիազորությունները վերապահվում է պաշտոնի անձնագրով սահմանված համապատասխան աշխատակցին:».

4) Հրամանի 7-րդ հավելվածում՝

ա. 3-րդ բաժնի 3.1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 6.1-ին ենթակետով.

«6.1) նախապատրաստում է Կոմիտեի գլխավոր քարտուղարի՝ Կոմիտեի աշխատակիցների արձակուրդների տրամադրման մասին հրամանների նախագծերը՝ դրանցում ամրագրելով նաև դրույթ աշխատակցի արձակուրդի կամ անաշխատունակության ժամանակահատվածում գտնվելու ընթացքում վերջինիս լիազորությունները պաշտոնի անձնագրով սահմանված համապատասխան աշխատակցին վերապահելու մասին՝ նշվածն ամրագրելով նաև «Mulberry» էլեկտրոնային համակարգում,».

բ. 4-րդ բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ՝ նոր 4.9-րդ կետով.

«4.9. Բաժնի աշխատակցի արձակուրդում կամ անաշխատունակության ժամանակահատվածում գտնվելու ընթացքում վերջինիս լիազորությունները վերապահվում է պաշտոնի անձնագրով սահմանված համապատասխան աշխատակցին:».

5) Հրամանի 8-րդ հավելվածի 4-րդ բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ՝ նոր 4.9-րդ կետով.

«4.9. Բաժնի աշխատակցի արձակուրդում կամ անաշխատունակության ժամանակահատվածում գտնվելու ընթացքում վերջինիս լիազորությունները վերապահվում է պաշտոնի անձնագրով սահմանված համապատասխան աշխատակցին».

6) Հրամանի 9-րդ հավելվածի 4-րդ բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ՝ նոր 4.9-րդ կետով.

«4.9. Բաժնի աշխատակցի արձակուրդում կամ անաշխատունակության ժամանակահատվածում գտնվելու ընթացքում վերջինիս լիազորությունները վերապահվում է պաշտոնի անձնագրով սահմանված համապատասխան աշխատակցին:»:

X

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Подписано: AVETISYAN ARNAK 1701920336 **ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**